Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն 15

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2026թ. մարտի 3-ի նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 3 մարտի 2026թ., ժ. 14:30
ավարտ՝ ժ. 15:35

Մասնակցում էին՝ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 8-ը:

Բացակայում էին՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Ա. Մանուկյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լ. Քոչարյանը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Է. Զաքարյանի փոխարեն մասնակցում էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության վերլուծությունների բաժնի պետ Ա. Չիլինգարյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրության պետական խորհրդի անդամներ Լ. Պետրոսյանը և Ն. Բաղդասարյանը, Արմստատի նախագահի խորհրդական Կ. Կոյումջյանը, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների Վարչության պետ Ա. Առուշանյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Լ. Մելիքյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2025 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին հավանություն տալու հարցը,
2. Այլ հարցեր:

Նիստը վարում էր Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 8 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ **ներկայացրեց** «2025 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագիծը (Հաշվետվություն), որը նախապես ներկայացվել էր Հանրային խորհրդի բոլոր անդամներին՝ կարծիքի:

Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «2025 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում՝

Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյանը և Վիճակագրության պետական խորհրդի անդամ Լ. Պետրոսյանը պատասխանեցին Հանրային խորհրդի անդամների հարցերին:

Նիստը եզրափակեց Հանրայի խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

04.03.2026թ.

Հանրային խորհրդի նախագահ՝ Ա. Անանյան